



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

« 03 » 09 2013թ. № 801-Ա

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿԿԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի թիվ 623-Ն որոշման հավելվածի 27-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝
 - 1) համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:
 - 2) համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Կազմակերպատնտեսական վարչությանը երկու շաբաթվա ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչությանը տրամադրել տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյան՝ համաձայն N 1 հավելվածում սահմանված ձևի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բադալյանին:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013 թվականի 09.03-ի
N 801-Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչությունը, որն իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման հետ կապված գործընթացները, վարում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից ստորագրված և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կնիքով կնքված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյան (այսուհետև՝ գրանցամատյան):
2. Գրանցամատյանում գրանցվում են համապատասխանության գնահատման նշանակված բոլոր մարմինները, ինչպես նաև նրանց հետ կապված և նրանց առնչվող ցանկացած տեղեկատվություն:
3. Համակարգող մարմնի կողմից համապատասխանության գնահատման նշանակված մարմին ճանաչելու մասին որոշման ընդունումից հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ համապատասխանության գնահատման նշանակված մարմինը գրանցում է գրանցամատյանում:
4. Գրանցամատյանի էջերը համարակալվում են, և գրանցամատյանը թելակարվում է:
5. Գրանցամատյանը փակելու դեպքում գրանցամատյանի վերջին գրանցումից հետո կատարվում է հետևյալ գրառումը՝ «Սույն գրանցամատյանում գրանցված է թվով համապատասխանության գնահատման նշանակված մարմիններ, օգտագործված է էջ»: Գրառման առկայությունը հիմք է հանդիսանում սույն կարգի համաձայն նոր գրանցամատյան բացելու համար:

6. Գրանցամատյանում գրառումները պետք է կատարվեն հստակ, ընթեռնելի ձեռագրով:
7. Գրանցամատյանում անճշտության և սխալ գրառումների ուղղումը կատարվում է մատյանում գրանցումներ կատարող աշխատակցի կողմից՝ գրանցամատյանի սխալ կամ ոչ ճիշտ գրառումները վերցնելով փակագծերի մեջ, հաջորդ տողում ավելացնելով ճիշտ գրառումները և կատարված ճիշտ գրառման կողքին դրվում է համապատասխան աշխատակցի ստորագրությունը: Գրառումներում կատարվող ուղղումը հաստատվում է գրանցամատյանն ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ՝ նշելով ուղղման տարեթիվը, ամիսը և ամսաթիվը:
8. Գրանցամատյանի բոլոր տվյալները ենթակա են հրապարակման: Այն պետք է մատչելի լինի հասարակության համար էլեկտրոնային և (կամ) այլ տարբերակով և հրապարակվի համակարգող մարմնի՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ արդիականացվող պաշտոնական կայքում :
9. Գրանցամատյանը, սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով փակելուց հետո պահպանվում է 5 տարի ժամկետով, որից հետո այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է արխիվ: